

ՌԱՖԱՅԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ

Կառավարման, նշանակումների և վարձատրությունների հանձնաժողովի անդամ
Ռիսկերի կառավարման հանձնաժողովի անդամ
Աուդիտի հանձնաժողովի անդամ



Ռաֆայել Երվանդի Սարգսյանը ծնվել է 1982 թվականի նոյեմբերի 6-ին Երևան քաղաքում: Հայաստանի քաղաքացի է:

2003 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի Իրավագիտության ֆակուլտետը, իսկ 2005 թվականին՝ նույն ֆակուլտետի մագիստրատուրան: 2008 թվականներին ավարտել է Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի և Հայ-Ռուսական համալսարանի ասպիրանտուրայի համատեղ ծրագիրը՝ ստանալով Իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 9 գիտական հոդվածների և ուսումնական ձեռնարկի հեղինակ/համահեղինակ է, ունի Chartered Management Institute-ի կողմից տրված CMI 5-րդ մակարդակ կառավարում և առաջնորդություն ոլորտում:

2007 թվականից սկսած Ռաֆայել Սարգսյանն աշխատել է ԱԿԲԱ բանկում. 2007-2012 թվականներին՝ որպես իրավաբան, 2012-2014 թվականներին՝ որպես Իրավաբանական բաժնի պետ, իսկ 2014-2021 թվականներին՝ որպես Իրավաբանական վարչության պետ:

2019 թվականից մինչ օրս դասավանդում է Բանկային իրավունք առարկան Երևանի պետական համալսարանի Իրավագիտության ֆակուլտետում:

Ռաֆայել Սարգսյանն ընդգրկվել է ԱԿԲԱ բանկի խորհրդի կազմում Բանկի խոշորագույն բաժնետեր «ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՓԲԸ կողմից 2021 թվականի դեկտեմբերին, իսկ 2022 թվականի հունվարին ընտրվել է որպես ԱԿԲԱ բանկի խորհրդի նախագահ:

Բանկի խորհրդի 2022 թվականի նոյեմբերի 2-ի որոշմամբ Ռաֆայել Սարգսյանը նշանակվել է Ռիսկերի կառավարման հանձնաժողովի անդամ, Աուդիտի հանձնաժողովի անդամ, Կառավարման, նշանակումների և վարձատրությունների հանձնաժողովի անդամ:

«ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՓԲԸ խորհրդի կողմից 2025 թվականի ապրիլի 21-ին որոշում է կայացվել Բանկի խորհրդի անդամ Ռաֆայել Սարգսյանին կրկին նշանակել Բանկի խորհրդի կազմում, առանց ընտրության՝ 3 (երեք) տարի ժամկետում: Մինչև 2026թ. ապրիլ ամիս հանդիսացել է Բանկի խորհրդի նախագահ: